Խորհրդի անդամների և Խորհրդի նախագահի վարձատրության կառուցվածք

1. Ընդհանուր սկզբունքներ

Այս Վարձատրության կառուցվածքը սահմանված է ՀՀ Կորպորատիվ կառավարման կանոնագրքի և շուկայական լավագույն փորձին համաձայն: Այն նպատակ ունի ապահովել, որ Խորհրդի վարձատրությունը.

- արտացոլի Խորհրդի անդամների դերերը, պարտականությունները և ժամանակային ներգրավվածությունը.
- նպաստի որակորավորված և անկախ անդամների ներգրավմանն ու պահպանմանը.
- մնա համաչափ ու հավասարակշռված՝ երաշխավորելով Խորհրդի անկախությունը.
- ապահովի արդարացիություն և կայունություն բոլոր անդամների համար.
- համահունչ լինի Բանկի երկարաժամկետ ռազմավարությանը և ԲՍԿ չափանիշներին.
- հաշվի առնի շուկայական չափանիշները, մասնավորապես՝ Արևմտյան Եվրոպայի միջին չափի ընկերությունների համար գործող եվրոպական համապատասխան ստանդարտները:

2. Խորհրդի նախագահի վարձատրությունը

Խորհրդի նախագահի վարձատրության մակարդակն արտացոլում է տվյալ պաշտոնի հետ կապված էականորեն ավելի լայն պատասխանատվությունը, առաջնորդող դերը, համակարգման գործառույթները և ավելի շատ ժամանակի հատկացումը:

Խորհրդի նախագահի տարեկան ընդհանուր վարձատրությունը որևէ ֆինանսական տարում չպետք է գերազանցի 80,000,000 (ութսուն միլիոն) ՀՀ դրամը՝ ներառյալ բոլոր հարկերը և տուրքերը: Այս սահմանաչափը չի ներառում այն գումարները, որոնք վճարվել են Խորհրդի նախագահին մինչև սույն կառուցվածքի ուժի մեջ մտնելու օրը:

3. Վարձատրության բաղադրիչներ

Վարձատրության բոլոր նշված չափերը ներառում են հարկերը:

3.1. Մասկանցության վճարներ

Խորհրդի նախագահը և Խորհրդի անդամները վարձատրվում են Խորհրդի նիստերին, ռազմավարական հարցերով քննարկումներին և Հանձնաժողովների նիստերին մասնակցության համար՝ ստորև ներկայացված աղյուսակի համաձայն: Սահմանված չափերը ներառում են բոլոր կիրառելի հարկերը և տուրքերը:

Մասնակցության վճարներ	**Ոչ ռեզիդենտ**	**Ռեզիդենտ**
Խորհրդի նիստեր և ռազմավարական հարցերով	2,000 ԵՎՐՈ յուրաքանչյուր նիստի համար	850,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր նիստի համար

հանդիպումներ		
Հանձնաժողովի նիստեր	1,250 ԵՎՐՈ յուրաքանչյուր նիստի համար	530,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր նիստի համար

3.2 Հաստատուն վճար

Հաստատուն վճարներն արտացոլում են լրացուցիչ պարտականությունները, ներառյալ՝ առաջնորդությունը, համակարգումը և աշխատանքային ծավալի ավելացումը:

Հանձնաժողովի նախագահներ

Հաստատուն վճարի եղանակ	**Ոչ ռեզիդենտ**	**Ռեզիդենտ**
Եռամսյակային հաստատուն վճար	5,000 ԵՎՐՈ յուրաքանչյուր եռամսյակ	2,125,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր եռամսյակ

Խորհրդի նախագահ

Հաստատուն վճարի եղանակ	**Ոչ ռեզիդենտ**	**Ռեզիդենտ**
Եռամսյակային հաստատուն վճար	25,000 ԵՎՐՈ յուրաքանչյուր եռամսյակ	10,625,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր եռամսյակ

3.3 Ճանապարհածախսի փոխհատուցում

Ճանապարհածախսի փոխհատուցումը տրամադրվում է ճանապարհորդության հետ կապված ժամանակի և ծախսերի հատուցման նպատակով: Գումարը վճարվում է Խորհրդի անդամին և չի ներառում կեցության ու տրանսպորտային ծախսերը:

Փոխհատուցման եղանակ	**Ոչ ռեզիդենտ**	**Ռեզիդենտ**
Ճանապարհածախսի փոխհատուցում	2,000 ԵՎՐՈ յուրաքանչյուր ճանապարհորդության համար	850,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր ճանապարհորդության համար

Բանկը նաև հոգում է կեցության և տրանսպորտային ծախսերը՝ Բանկի Խորհրդի կամ Խորհրդի հանձնաժողովների աշխատանքի հետ կապված այցերի ընթացքում:

3.4 Շնորհակալական պարգևավճար (հայեցողական)

Իրավասությունների ժամկետի ավարտին Խորհրդի նախագահին և Խորհրդի անդամներին կարող է տրամադրվել հայեցողական շնորհակալական վճար.

- Ստանդարտ սահմանաչափ՝ 2,000,000 ՀՀ դրամ
- Առավելագույն սահմանաչափ (բացառիկ դեպքերում)՝ 4,000,000 ՀՀ դրամ

Պարգևավճարը պայմանագրային չէ, հիմնված չէ կատարողականի վրա և տրամադրվում է Խորհրդի հայեցողությամբ: Այն չի ստեղծում նախադեպ և ենթակա է պաշտոնական հաստատման Խորհրդի կողմից: